ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԿԻՐԱՆՑԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Տավուշի մարզ գ. Կիրանց 1փողոց 40/1 РА Армениа Тавушская облст село Киранц 1улица 40/1

հեռ .тел.phon. 077-43-49-45 E-Mail kiranc.tavush@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ

ԿԻՐԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„19„ հուլիսի 2018թ. թիվ 15-Ա

ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 46-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2018 թվականի հունվարի 23-ի թիվ 11-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2018 թվականի հիմնական միջոցառումների պլանի 12.1.4 կետի 2018 թվականի օգոստոսի 17-ին իմ ղեկավարությամբ Կիրանց համայնքում անց է կացվելու շտաբային ուսումնավարժություն «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը հակառակորդի հարձակման դեպքում» թեմայով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել՝ շտաբային ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ Կիրանց համայնքիղեկավարի օգնական Անդրանիկ Գարուշի Նազարյանին:
2. Ուսումնավարժությանը ներգրավել՝
   1) համայնքային կազմավորումների հրամանատարներին, 4 անձ

   2) համայնքապետարանի աշխատակազմին, 4անձ

3. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ Անդրանիկ Գարուշի Նազարյանին՝
   1) կազմակերպել՝ ուսումնավարժության պլանավորող փաստաթղթերի ժամանակին մշակումը և հաստատումը՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Տավուշի մարզային փրկարարական վարչության հետ,

   2) կազմակերպել ուսումնավարժությանը մասնակիցների նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի,

   3) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2018 թվականի օգոստոսի 15-ին:
4. Շտաբային ուսումնավարժության մասնակիցներին՝

   1) ուսումնասիրել շտաբային ուսումնավարժության անցկացման համապատասխան փաստաթղթերը,

   2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

5. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Կիրանց համայնքի ղեկավար Կ. Շահինյան